# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հունվարի 2020 թվականի N 32-Ա

### ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, $219^{1}$ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Հայկ Ենոքի Ավետիսյանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով ընտանիքին պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 54 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ թոնրատան տանիքի վերակառուցում, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Հայկ Ենոքի Ավետիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Հայկ Ենոքի Ավետիսյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228101 հաշվին:

3.Պարտավորեցնել Հայկ Ենոքի Ավետիսյանին, օրինականցնել ինքնակամ կառուցված շինությունները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հայկ Ենոքի Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 24
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«24» հունվարի 2020 թվականի N 33-Ա

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, որոշում եմ.

1.Քաղաքացի Տիգրան Վլադիմիրի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 38 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ պահակատան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Տիգրան Վլադիմիրի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հունվարի 2020 թվականի N 34-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, որոշում եմ.

1.Քաղաքացի Համազասպ Մարտիրոսի Բարոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 50-րդ փողոցի թիվ 30-32 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Համազասպ Մարտիրոսի Բարոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 24
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«24» հունվարի 2020 թվականի N 35-Ա

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.«ԳԼՈԲԱԼ ՌԻԸԼ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ-ին՝ տնօրեն Արա Խաչատուրի Մարկոսյան, սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 36 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ մենատների և եռահարկ շենքերի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «ԳԼՈԲԱԼ ՌԻԸԼ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ-ին՝ տնօրեն Արա Խաչատուրի Մարկոսյան, որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 24
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունվարի 2020 թվականի N 36-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացիներ Հայկ Հովհաննեսի Մխիթարյանին և Կարեն Գուրգենի Դավթյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 1-ին թաղամասի թիվ 33 հասցեում գտնվող 07-042-0384-0053 կադաստրային համարի 1000,0 քառ.մետր մակերեսով հողակտորի գործառնական նշանակությունը համարել փոփոխված բնակավայրի բնակելի կառուցապատման հողերից բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հասարակական կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17122019-07-0114, տրված 2019 թվականի դեկտեմբերի 17-ին):

2. Քաղաքացիներ Հայկ Հովհաննեսի Մխիթարյանին և Կարեն Գուրգենի Դավթյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 1-ին թաղամասի թիվ 33 հասցեի հասարակական կառուցապատման հողակտորում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ հասարակական նշանակության շինության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

3. Սույն որոշման երկրորդ կետն ուժի մեջ է մտնում որոշման առաջին կետում նշված հողի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2020 թվականի N 37-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով այն, որ 2020 թվականի հունվարի 16-ին Ջրվեժի համայնքապետարանում կայացած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդում հաղթած անձանցից 10 օրվա ընթացքում ամբողջությամբ չեն մուծել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը և հիմք ընդունելով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդի NN 2/1-2/2 արձանագրությունները, ***որոշում եմ.***

1. Հաղթող ճանաչել սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձանց և աճուրդային վաճառքի հաղթողներին տրամադրել հողամասեր, համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ սահմանված ժամկետում ապահովել սույն որոշմամբ աճուրդում հաղթող (գնորդ) ճանաչված անձանց կողմից վճարման ենթակա գումարների ամբողջությամբ մուծումը (փոխանցումը) Ջրվեժ համայնքի բյուջեի համապատասխան հաշվին:

3. Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ աճուրդով գնված հողամասերի վճարման ենթակա գումարների (սահմանված ժամկետում ու կարգով) վճարումը կատարելուց հետո, աճուրդում հաղթողներին ապահովել հողամասի հատակագծով, նշահարման ակտով և կնքել հողամասերի օտարման պայմանագրեր:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 29
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2020 թվականի
հունվարի 29-ի N 37-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1.Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝

Գոռ Գևորգի Ստեփանյան, անձնագիր AN 0455283, տրված 005-ի կողմից 30.04.2013 թվականին

հասցեն՝ քաղաք Երևան, Նոր-Նորքի 6-րդ զանգված, Լյուքսեմբուրգի փողոց, 1-ին նրբանցք, 3-րդ շենք, բն. 14:

2.Գնորդը 23.12.2019 թվականին մուծել է մասնակցության վճար՝ 10 000 դրամ 900105228119 հ/հ, անդորրագիր N 001035:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-042-0406-0017; 3; 1208,0 քառ.մ; 300 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի երկրորդ առավելագույն (վաճառքի) գինը՝ 27 300 000 դրամ, որը ենթակա է վճարման ամբողջությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«29» հունվարի 2020 թվականի N 38-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Ռաֆիկ Ղուկասի Մարգարյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ռաֆիկ Ղուկասի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 29–րդ փողոցի թիվ 8 հասցեից բաժանված $S_1$=500,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 29-րդ փողոց, թիվ 8, $S_2$=500,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 29-րդ փողոց, թիվ 8/2:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռաֆիկ Ղուկասի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հունվարի 2020 թվականի N 39-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին 2020 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով՝

1)Ռոման Ատոմի Մովսիսյանին, Ջրվեժ համայնքի Ձովք գյուղի 3-րդ փողոցի թիվ 1 հասցեում,

2)Զորիկ Սերյոժայի Գալստյանին, Ջրվեժ համայնքի Ձովք գյուղի Գլխավոր խճուղու թիվ 14/2 հասցեում,

3)Նաիրա Ռուբենի Ղանդիլյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 14 հասցեում,

4)Սամվել Աշխարաբեկի Մելիքսեթյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 2-րդ փողոցի թիվ 1 հասցեում:

2.Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հունվարի 2020 թվականի N 40-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 42-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել «Բելաստ-18» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Արգինե Ալոյան, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/10 հասցեում 2020 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ և որպես հանրային սննդի օբյեկտ՝ տալ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:

2.Թույլատրել «Գյուլումյաններ հայր և որդի» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Մինաս Գյուլումյան, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 15-րդ փողոցի թիվ 1 հասցեում 2020 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ և տեղադրելու արտաքին գովազդ 15-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող շինության հարակից տարածքում:

3.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի թիվ 6/13 հասցեում 2020 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ:

4.Թույլատրել «ՄԳՄ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Գևորգ Մաթևոսի Մաթևոսյան, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 18-րդ փողոցի թիվ 1-3 հասցեում 2020 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ:

5.«Մերիդիան» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Վարդան Բաբաջանյան, տալ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 18-րդ փողոցի թիվ 1-3 հասցեում 2020 թվականին որպես հանրային սննդի օբյեկտ՝ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:

6.Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

7.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2020 թվականի N 41-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ***.

1.Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին 2020 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով՝

1)Մարինե Ալբերտի Կիրակոսյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 120/1 հասցեում,

2)Նունե Սամվելի Կիրակոսյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 18 հասցեում,

3)Լյուդմիլա Պայլայի Գրիգորյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Երիտասարդության փողոցի թիվ 22 հասցեում,

4)Ալֆրիդա Պողոսի Հայրապետյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 14 հասցեում:

2.Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 29
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«29» հունվարի 2020 թվականի N 42-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հովիկ Ջալիկի Հովհաննեսյանի (ծնված՝ 1948 թվականի հունվարի 24-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական 6-րդ թաղամասի թիվ 6 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 884767 վկայական, տրված 2003 թվականի մարտի 24-ին, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի հունվարի 20-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հովիկ Ջալիկի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական 6-րդ թաղամասի թիվ 6 հասցեի հողակտորում 2017 թվականին ինքնակամ կառուցվել է այգետնակ՝ 160,0 քառ.մետր, շինություններ՝ 16,9 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Հովիկ Ջալիկի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական 6-րդ թաղամասի թիվ 6 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Հովիկ Ջալիկի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական 6-րդ թաղամասի թիվ 6 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված այգետնակը՝ 160,0 քառ.մետր, շինությունները՝ 16,9 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 442 364 (չորս հարյուր քառասուներկու հազար երեք հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանին վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հովիկ Ջալիկի Հովհաննեսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունվարի 2020 թվականի N 43-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Անուշ Արայիկի Խաչատրյանի (ծնված՝ 1979 թվականի հուլիսի 3-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 19-րդ թաղամասի թիվ 138 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16052012-07-0191 վկայական, տրված 2012 թվականի մայիսի 16-ին, անհատ ձեռնարկատեր Արա Արտաշեսյանի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Արա Արտաշեսյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Անուշ Արայիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 19-րդ թաղամասի թիվ 138 հասցեի հողակտորում 2017 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն՝ 38,8 քառ.մետր, օժանդակ շինություն՝ 23,7 քառ.մետր, զրուցարան՝ 42,3 քառ․մետր և պարիսպ՝ 7,4 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Անուշ Արայիկի Խաչատրյանինին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 19-րդ թաղամասի թիվ 138 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Անուշ Արայիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 19-րդ թաղամասի թիվ 138 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 38,8 քառ.մետր, օժանդակ շինությունը՝ 23,7 քառ.մետր, զրուցարանը՝ 42,3 քառ․մետր և պարիսպը՝ 7,4 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 215 384 (երկու հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանին վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Անուշ Արայիկի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«30» հունվարի 2020 թվականի N 44-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մինաս Թելմանի Զորանյանի (ծնված 1964 թվականի ապրիլի 18-ին) դիմումը՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 17 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը (նախկին հանրակացարանի շենք)՝ 285,23 քառ.մետր (բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 342,62 քառ.մետր, որից՝ մինչև 2001 թվականը կառուցված՝ 86,6 քառ.մետր, 2001 թվականից հետո՝ 256,02 քառ.մետր) և պարիսպը՝ 9,54 քառ.մետր մակերեսներով՝ այդ բնակելի տան սպասարկման 388,1 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի հետ իրեն օտարելու մասին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23122019-07-0092, տրված 2019 թվականի դեկտեմբերի 23-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 2-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 և 35-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 15-ի թիվ 5-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 17 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը (նախկին հանրակացարանի շենք)՝ 285,23 քառ.մետր (բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 342,62 քառ.մետր, որից՝ մինչև 2001 թվականը կառուցված՝ 86,6 քառ.մետր, 2001 թվականից հետո՝ 256,02 քառ.մետր) և պարիսպը՝ 9,54 քառ.մետր մակերեսներով՝ այդ բնակելի տան սպասարկման 388,1 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի հետ միասին օտարել՝ նախապատվություն տալով կառույցն իրականացրած Մինաս Թելմանի Զորանյանին, ընդ որում՝ մինչև 2001 թվականը զբաղեցրած 86,6 քառ.մետր մակերեսով հողամասը և վրան կառուցված 86,6 քառ.մետր արտաքին մակերեսով բնակելի տունը տրամադրել անհատույց, իսկ 2001 թվականից հետո զբաղեցրած 301,5 քառ.մետր մակերեսով հողամասը, վրան կառուցված 256,02 քառ.մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և պարիսպը՝ 9,54 քառ.մետր մակերեսով, օրենքով սահմանված կարգով օտարել նրան՝ ուղղակի վաճառքի ձևով:

2. Պարտավորեցնել Մինաս Թելմանի Զորանյանին՝ մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 1 363 986 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր ութսունվեց), շինությունների՝ բնակելի տան և պարսպի վաճառքի արժեքը՝ 2 046 564 (երկու միլիոն քառասունվեց հազար հինգ հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի օտարման պայմանագիր:

4.Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Մուշեղ Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մինաս Թելմանի Զորանյանին որոշման ընթացքի մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2020 թվականի N 45-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Լուիզա Գևորգի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 12 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ավտոտնակի կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լուիզա Գևորգի Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2020 թվականի N 46-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին և ՍՊԸ-ներին մինչ 2020 թվականի ապրիլի 1-ը զբաղվել հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ՝

1)«Նորայր-Ավետիք» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Աշոտ Սանթրոսյան, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի թիվ 6/17 հասցեում,

2) «Բասխ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Վահան Բաղդասարյան, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի 5/34-5/35, 6/4 հասցեներում,

3) Արթուր Աղաբեկի Ղահրամանյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 3 հասցեում,

4) Քրիստինե Ռուբենի Հարությունյանին, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի թիվ 7/9-7/10 հասցեում:

2.Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին և ՍՊԸ-ին մինչ 2020 թվականի ապրիլի 1-ը զբաղվել, ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով՝

1) Մոնիկա Աբելի Բիլյանին, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի թիվ 32 հասցեում,

2) Անժելիտա Էդիկի Ալեքսանյանին, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 81 հասցեում,

3) Անի Վաղարշակի Մելտոնյանին, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 58 հասցեում:

3.Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

4.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» հունվարի 2020 թվականի N 47-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԴՌՆԵՐԻ, ԲԱՑՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գայանե Արամայիսի Մուշկամբարյանի (ծնված՝ 1970 թվականի նոյեմբերի 04-ին), Մանվել Արամայիսի Մուշկամբարյանի (ծնված՝ 1971 թվականի դեկտեմբերի 28-ին), Էլյա Պետրոսի Մուշկամբարյանի (ծնված՝ 1950 թվականին), Միշա Արամայիսի Մուշկամբարյանի (ծնված՝ 1974 թվականի օգոստոսի 30–ին) լիազոր անձ Հայկանուշ Սամվելի Մկրտչյանի (ծնված՝ 1982 թվականի մարտի 3–ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 34 հասցեի տնամերձ հողամասում կառուցված բնակելի տան 1-ին հարկում ինքնակամ բացված երկու դռները և մեկ բացվածքը, ինչպես նաև գույքը բաժանելու երկու առանձին մասերի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17062019–07–0092, տրված 2019 թվականի հունիսի 14–ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Էլյա, Միշա, Գայանե, Մանվել Մուշկամբարյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 34 հասցեի տնամերձ հողակտորում կառուցված բնակելի տան առաջին հարկում ինքնակամ բացվել է 2 դուռ և 1 բացվածք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Էլյա, Միշա, Գայանե, Մանվել Մուշկամբարյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 34 հասցեի բնակելի տան առաջին հարկում ինքնակամ բացված երկու դռների և մեկ բացվածքի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Էլյա, Միշա, Գայանե, Մանվել Մուշկամբարյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 34 հասցեի բնակելի տան առաջին հարկում ինքնակամ բացված երկու դռները և մեկ բացվածքը համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 7 800 (յոթ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 34 հասցեի տնամերձ հողամասից բաժանված $S_1$=692,83 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 12-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 34, $S_2$=98,77 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 12–րդ փողոց, 2–րդ փակուղի, թիվ 34/1:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Էլյա, Միշա, Գայանե, Մանվել Մուշկամբարյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 31

գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» հունվարի 2020 թվականի N 48-Ա

### ՎԱԶՐԻԿ ՂԱԼՈՒՄՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, հիմք ընդունելով Վազրիկ Նվերի Ղալումյանի դիմումը և հաշվի առնելով Ջրվեժ համայնքի ղեկավարին կից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 30-ի N 1 նիստի արձանագրությունը, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի թիվ 17 հասցեի տան բնակիչ Վազրիկ Նվերի Ղալումյանին՝ գրավադրելու նույն հասցեում բնակվող անչափահաս որդուն՝ Գառնիկ Վազրիկի Ղալումյանին (ծնված՝ 2002 թվականի մայիսի 5-ին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի թիվ 17 հասցեի գույքի 2/7 բաժնեմասը նույնպես (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26062018-07-0069, տրված 2018 թվականի հունիսի 26-ին):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վազրիկ Նվերի Ղալումյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. հունվարի 31
գ. Ջրվեժ